

7

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ԱՐԹՈՒՐ ԴԵՐԵՆԻԿԻ ԴՈՒՍՏԱՑՅԱՆ

1980 թ. ՈԱԶՄԱԿԱՆ ՀԵՂԱԾՐՁՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒ.
ՊԱՏճԱՌՆԵՐԸ, ԸՆԹԱՑՔԸ, ՀԵՏԵՎՎԱՆՔՆԵՐԸ

Է.00.02 «ՀԱՍԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ»
մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2007

Առենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱՍ Արևելագիտության
ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների թեկնածու,
դոց. Ռ. Ա. Սաֆրաստյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դրկտոր
Ա. Գ. Ավազյան

պատմական գիտությունների թեկնածու,
դոց. Հո. Ս. Կորիսմազյան

Առաջատար կազմակերպություն՝


Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2007 թ. հունիսի 8-ին ժ. 13^{րդ}ին ՀՀ ԳԱՍ
Արևելագիտության ինստիտուտում (հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ
Բաղրամյան պող., 24 գ) գործող ՀՀ ԲՈՆ-ի 006 մասնագիտական խորհրդի
նիստում:

Առենախոսությանը կարելի է ծանոքանալ ՀՀ ԳԱՍ Արևելագիտության
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2007 թ. մայիսի 8-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու՝


Ա. Վ. Շաքարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՇԱՅՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1980 թ. ուազմական հեղաշրջման համալիր ուսումնասիրությունն ունի կարևոր գիտական և կիրառական նշանակություն: Թեմայի հաճակողմանի հետազոտումը խվատ արդիական է ոչ միայն թուրքիայի այդ ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրման, այլ նաև ժամանակակից թուրքիայում տեղի ունեցող քաղաքական դինամիկ գործընթացները, ինչպես նաև այդ գործընթացների վրա բանակի ունեցած ազդեցությունն ավելի խորը հասկանալու և գնահատելու համար:

Բանակը կարևոր դերակատարում ունի հանրապետական թուրքիայի քաղաքական կյանքում: Այն հանդես է գալիս Զեմալ Աքարյուրքի հիմնադրած հանրապետության հիմնարար արժեքների և երկրի պաշտոնական գաղափարախոսության՝ թեմայիզմի պաշտպանի դիրքերից: Թուրքիայի պատմության վերջին հինգ տասնամյակների ընթացքում բանակն արդեն չունի անգամ ուրբակիորեն միջամտել է երկրի քաղաքական կյանքին (1960 թ., 1971 թ., 1980 թ., 1997 թ.)՝ հիմնավորելով այն Աքարյուրքի ժառանգած գաղափարական և քաղաքական արժեքները պաշտպանելու անհրաժեշտությամբ: Այսօր էլ, եթե թուրքիայում սրբել է պայքարը քենական ներքին և խալամականների միջև, բորբական հասարակությունն ակտիվորեն ըննարկում է բանակի հերթական միջամտության հնարակորդությունը, թուրքիայի աշխարհիկ պետություն մնալու հետանկարները և խալամական պետության վերածվելու և դասական խալամական երկրների շարքերը համարելու վտանգները: Վերջին հաշվով՝ թուրքիայում իրականացված ուազմական հեղաշրջումները, այդ բյուս և 1980 թ. հեղաշրջումը, ի թիվս այլ հանգամանքների, պայմանավորված էլին նաև այն քացահայտ և քանված պայքարով, որ ընթանում էր և շարունակում է ընթանալ քենականների և խալամամես ուժերի միջև թուրքիայի պետական կառուցվածքի ապագայի, աշխարհիկ կամ խալամական պետություն դատնալու, ներքին և արտաքին կողմնորոշումների առանցքային հիմնախնդիրների շուրջը:

1980 թ. սեպտեմբերի 12-ին բորբական բանակի վերնախավի կողմից իրականացված սուզմական հեղաշրջման ուսումնասիրությունն արդիական է նաև այն առումով, որ այն թուրքիայում սկիզբ դրեց նոր քաղաքական համակարգի, որը գործում է մինչև օրս: Հեղաշրջման հեղինակների նախանշած քաղաքական համակարգի առանձնահատկություններով՝ նև զգալի շափով պայմանավորված այն քաղաքական սուր հակասությունները, որոնք ի հայտ են եկել այսօրվա թուրքիայի քաղաքական-հասարակական

և գաղափայական կյանքում: Մասնավորապես զինվորականների կողմից առաջարկված և նրանց ճնշման ներքո ընդունված 1982 թ. սահմանադրությունը ենթարկվում է սուր քննարատուրյան՝ հասարակության տարրեր խավերի կողմից: Այդ քննարատուրյան հիմնական բիրախն է 1982 թ. սահմանադրությամբ ամրագրված բանակի որոշիչ դերը երկրի քաղաքական համակարգում: Վերջին մի քանի տարիների ընթացքում մժուրքիան տեղի տալով Եվրամիության պահանջներին՝ համապատասխան փոխություններ է մոցնում երկրի կառավարման համակարգում՝ նվազեցնելով բանակի դերակատարությը:

Սույն թեմայի ուսումնասիրումը կարևոր է և հնարավորություն է տալիս խորությամբ հասկանալու մեր հարևան հանրապետության քաղաքական կյանքում վերջին շրջանում ի հայտ եկած քարդ երևույթները և դրանց հետևանքները, ինչպես նաև նրանց ազդեցությունն ապագա գործընթացների վրա:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Առենախոսության նպատակն է համալիր ուսումնասիրության ներարկել 1980 թ. սեպտեմբերի 12-ի ուսումնասիրման նախադրյալներն ու պատճառները, ներկայացնել նրա նախապատրաստումն ու իրազործումը, քննել դրա հետևանքները: Հեղինակն այս ամենին ձգտել է հասնել հետևյալ խնդիրների առաջադրմամբ.

- Ուսումնասիրել բանակ-հասարակություն փոխհարաբերությունները մժուրքիայում և քացահայտել բանակի դերը երկրի պետական-քաղաքական կյանքում, քննարկել քորքական բանակի գաղափարա-քաղաքական նկրտումները, ներկայացնելով բանակի՝ քաղաքական կյանքին միջամտելու դրդապատճառներն ու նպատակները:
- Սկզբնադրյուրների և այլ նյութերի վերլուծության հիման վրա ներկայացնել ներքաղաքական իրադրությունը մժուրքիայում 1970-ական թթ. վերջերին՝ ուսումնասիրման նախօրյակին:
- Լուսարաններ ահարենքության աննախադեպ աճը մժուրքիայում և քննել դրա պատճառները:
- Քննել «Գորշ գայլերի» պանրյուրքիստական շարժման ակտիվացմանը նպաստող գործուները, հետազոտել նրա փոխհարաբերություններն իշխանությունների և քարձրաստիճան զինվորականության հետ, վերլուծել «Գորշ գայլերի» կողմից իրականացված զանգվածային ահարենքության դրսերությունները, քացահայտել դրա իրական նպատակները:

- Ներկայացնել ուսումնասիրման հեղաշրջման նախապատրաստման և իրազործման գործընթացը, քննարկել արտաքին գործուների ազդեցությունը դրա վրա:
- Ուսումնասիրել հեղաշրջությունների քաղաքականությունը՝ քացահայտելով դրա հիմնական ուրիշածությունն ու նպատակները:
- Դիտարկել զինվորական իշխանությունների անմիջական վերահսկողությամբ ընդունված 1982 թ. սահմանադրությունը, քննել դրա հիմնական առանձնահատկությունները՝ համեմատած նախորդ՝ 1961 թ. սահմանադրության հետ:
- Ներկայացնել «անցումային շրջանում» զինվորականների կողմից իրականացրած քաղաքական համակարգի վերափոխումները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Առենախոսության թեման հայրենական քուրքագիտության մեջ դեռևս չի արժանացել համալիր ուսումնասիրման: Այն իր բավանդակությամբ և հարցադրումներով առաջինն է, որտեղ փորձ է արվում համակողմանից ուսումնասիրել 1980 թ. ուսումնասիրման հեղաշրջումը, վել հանել դրա իրական պատճառները, քննոյթն ու նշանակությունը մժուրքիայի Հանրապետության հետագա զարգացման համար՝ օգտագործելով մասնավորապես մեզանում սակավ հայտնի բորբական, եվրոպական, ամերիկյան, ուստական և հայկական աղբյուրներ ու վավերագրեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ժամանակագրական առումով առենախոսությունն ընդգրկում է 20-րդ դարի 70-ական թթ. կեսից մինչև 1983 թ. ընկած ժամանակահատվածը: Ժամանակագրական սահմանների ընտրությունը պայմանավորված է նրանով, որ 1970-ական թթ. կեսերից ի հայտ եկան հեղաշրջման հիմնական նախադրյալներն ու պատճառները, իսկ 1983 թ. դեկտեմբերին ավարտվեց հեղաշրջման «անցումային շրջանը» և զինվորականներն իշխանությունը փոխանցեցին քաղաքական կոսակցություններին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Առենախոսության մեթոդաբանական հիմքը ուսումնասիրման հեղաշրջման նախադրյալների, իրականացման գործընթացի և հետևանքների խնդիրների հետ կապված հարցադրումների և տեսակետների քննական մեկնությունն է և փաստերի համեմատական-համադրական վերլուծության սկզբունքը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱԾԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սույն ատենախոսության իմանական դրույթները, մեկնաբանություններն ու եզրահանգումները կարող են օգտագործվել Թուրքիայում ռազմական հեղաշրջումների և Թուրքիայի նորագույն պատմության իմանալիքներին և առանձնահատկություններին նվիրված ուսումնասիրություններում, համալսարանական դասախոսություններում և հասուկ դասընթացներում։ Աշխատության դրույթները կարող են օգտագործվել պատմական համապատասխան մարմինների համար վերլուծական նյութեր պատրաստելու, ինչպես նաև Թուրքիայի ներքաղաքական գործընթացների նկատմամբ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական մոտեցումները ճշգրտելու համար։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության իմանական դրույթներն ու եզրահանգումները լուսաբանվել են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում, երիտասարդ արևելագետների հանրապետական գիտաժողովներում կարդացված գեկուցումներում, ինչպես նաև քորքագիտական ժամանակակից իմանախնդիրներին նվիրված կողը սեղանների քննարկումներում։ Ատենախտաբարյունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխափորվել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի ընդլայնված նիստում։

ՕԳԱԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՆՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աշխատությունը գրվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն և բուրքերեն լեզուներով տարաբնույթ աղյութների և ուսումնասիրությունների իմանալիք։ Ուսումնասիրությանը զգայիրեն նպաստել են պաշտոնական հրատակությունները, քաղաքական գործիչների հուշերն ու հրատարակությունները, պարբերականները, հայ և օտարազգի հետազոտողների՝ քննարկվող թեմային նվիրված արժեքավոր աշխատություններն ու հոդվածները։

Ատենախոսության աղյութագիտական հենք են ծառայել Թուրքիայում հրատարակված այլևայլ վավերագրերը, որոնք վերաբերում են հեղաշրջնան նախապատրաստմանը և հետևանքներին։ Առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում Ազգային անվտանգության խորհրդի (Milli Güvenlik Konseyi) պաշտոնական հայտարարությունները,

որոշումները, օրենքները¹, 1981 թ. ԱԱԽ-ի կողմից հրատարակված «Սեպտեմբերի 12-ից առաջ և հետո» վերնագրի կողղ ԱԱԽ-ի պաշտոնական տեղակագրում տեղ գտած վավերագրերը², ինչպես նաև հեղաշրջնան առաջնորդ Քենան Էվրենի ճառերը և ելույթները³։ Արժեքավոր սկզբանաբարյութներ են քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների ծրագրային փաստաթղթերը⁴, հաշվետվությունները⁵, կառավարությունների ծրագրերը, Թուրքիայի Հանրապետության պաշտոնական վիճակագրական տեղեկատվական տվյալները⁶ և այլն։

Թեմայի բազմակողմանի ուսումնասիրման համար առանձնահատուկ արժեք են ներկայացնում Թուրքիայի հանրապետության յորեարդ նախագահ, 1980 թ. ռազմական հեղաշրջնան առաջնորդ, քանակի գեներալ Քենան Էվրենի հուշերի բազմահատորյակը⁷։ Էվրենի հուշերը կարևոր տեղեկություններ են պարունակում հեղաշրջնան իրական պատճառների բացահայտման, նախապատրաստման գործընթացի մանրամասնությունների և անցումային շրջանում զինվորականության քաղաքականության վերաբերյալ որոնք հնարավորություն են տալիս լավագույն հասկանալ զինվորականների նպատակներն ու գործունեությունը։ Այնուամենայնիվ, պետք է նշել, որ Քենան Էվրենի աշխատության մեջ ներկայացվում են հեղաշրջնան միայն դրական կողմները, իսկ որոշ դեպքերում էլ հեղինակը միտունավոր խոսափում է «անցանկալ» մանրամասնություններից։

Աշխատանքի համար կարևոր նշանակություն ունեն հեղաշրջնան ժամանակակից քաղաքական գործիչների և դիվանագետների հուշերն ու հրապարակումները։ Թեմայի ուսումնասիրման համար արժեքավոր տեղեկություններ են պարունակում 1974-1983 թթ. Թուրքիայում ԽՍՀՄ արտա-

¹ Milli Güvenlik Konseyince Kabul Edilen Kanunlar, Yayımlanan Bildiri ve Kararlar ile Önemli Mezvuat, Cilt-1. Ankara, 1981; Siyasi Partiler Kanunu, İstanbul, 1983; Milletvekili Seçimi Kanunu, İstanbul, 1983; Kanun No. 2533, Siyasi Partilerin Fahsine Dair Kanun. - Kenan Evren, Kenan Evren'in Anıları, Cilt-2. İstanbul: Milliyet Yayın., 1991, s. 418;

² 12 Eylül Öncesi ve Sonrası, MGK Genel Sekreterliği, Ankara: TTK Basımevi, 1981;

³ Türkiye Cumhuriyeti Başbakanı Orgeneral Kenan Evren'in Söylev ve Demeçleri (12 Eylül 1980-12 Eylül 1981). Ankara: Başbakanlık Basımevi, 1981;

⁴ Cumhuriyet halk partisi programı. Ankara, 1976; Adalet Partisi. Program ve tütük. Ankara, 1969; Anavatan partisi programı. Ankara 1983; DİSK Kuruluş Bildirisi. Ana Tüzüğü. İstanbul: DİSK Yayın., 1968;

⁵ DİSK - 6. Genel Kurulu Çalışma Raporu. İstanbul, 1977; DİSK - 7. Genel Kurulu Çalışma Raporu. İstanbul, 1980;

⁶ Türkiye İstatistik Yıllığı 1973, Ankara; Türkiye İstatistik Yıllığı. Ankara, 1981;

⁷ Kenan Evren, Kenan Evren'in Anıları Cilt-1. İstanbul: Milliyet Yayın., 1990; Kenan Evren, Kenan Evren'in Anıları Cilt-2. İstanbul: Milliyet Yayın., 1991; Kenan Evren, Kenan Evren'in Anıları Cilt-3. İstanbul: Milliyet Yayın., 1991; Kenan Evren, Kenan Evren'in Anıları Cilt-4. İstanbul: Milliyet Yayın., 1991;

կարգ և լիազոր դեսպան Ալեքսեյ Ռուդյոնովի հուշերը: 1970-1980 թթ. ընկած ժամանակահատվածում բուրքական բանակի վերաբերյալ արժեքավոր է 1971 թ. զինվորականների «միջամտության» կազմակերպիչներից, բանակի գեներալ Սոնիսին Բարորի՝ «Հիշողություններ և տեսակետներ» աշխատությունը⁸: «Գորշ գայլերի» գործունեության լուսաբանման համար հատկանշական է ԱԾԿ-ի նախկին փոխնախագահ Ռոզա Մյուֆրյուոլոյի «Մահակաների զինվորները» (*Coplarin Askerleri*) աշխատությունը, որտեղ հեղինակը նշում է, որ նախքան 1980 թ. ռազմական հեղաշրջումը «գորշ գայլերը» բանակում բարձրաստիճան զինվորականներից բաղկացած խմբավորում ունեին, որոնց միջոցով ռազմական հեղաշրջում էին նախապատրաստում⁹:

Աշխատանքի մեջ հեղինակն օգտագործել է նաև պանթեյուրքիստական Ազգայնական շարժում կուսակցության առաջնորդ Ալիքարալան Թյուրքիչի¹⁰ և իսլամադավան Ազգային Փրկություն կուսակցության դեկանավար Նեշմերին Էրբարանի¹¹ աշխատությունները, որոնք բացահայտում են նշված կուսակցությունների քաղաքական և գաղափարական հիմնական ուղղություններն ու առանձնահատկությունները:

Ատենախատության մեջ քննարկվող տարրեր հարցերի լուսաբանման, ինչպես նաև Թուրքիայի ներքաղաքական գործընթացների առանձնահատկությունները ճիշտ բնընթելուն մեծապես նպաստել են հայ արևելագետներ Ռ. Կոնդակչյանի¹², Ռուբեն Սահմանյանի¹³, Նիկոլայ Հովհաննիսյանի¹⁴, Հրաչյակ Սիմոնյանի¹⁵, Արմեն Ավագյանի¹⁶, Հոհիսիմե Կորխմազ-

⁸ Muhsin Batur , Anılar ve Görüşler. İstanbul: Milliyet Yay., 1985;

⁹ Rıza Müftüoğlu, Copların Askerleri. Ankara: Ocak Yay., 2000;

¹⁰ Alparslan Türkeş, Temel Görüşler. İstanbul: Dergah Yay., 1975;

¹¹ Necmettin Erbakan, Milli Görüş. İstanbul: Dergah Yay., 1975;

¹² Р. П. Кондакчян, Турция: Внутренняя политика и ислам. Ереван: изд. АН Арм. ССР, 1983;

¹³ Ռուբեն Սահմանյան, «Հնարավոր չեղական պատմական առաջնորդ հարևանների միջն... - Երևան: Զանգակ-97, 2003; Ռубեն Սահմանյան, Возвращение "серых волков": Консервативная партия в политической жизни Турции (1983-1985 гг.). - Սերմանը և Միջնականը Երկրներ և ժողովուրդներ XXIII. Երևան: Զանգակ-97, 2004, էջ 254-276;

¹⁴ Նիկոլայ Հովհաննիսյան, Սերմանը Երկրներ և ժողովուրդներ XVI. Երևան: Զանգակ-97, 1996, էջ 9-19; Նիկոլայ Հովհաննիսյան, Արարական Երկրների պատմություն: Հատոր III. Երևան: Զանգակ-97, 2006;

¹⁵ Հր. Սիմոնյան, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից. Երևան: Հայաստան, 1991;

¹⁶ Արմեն Ավագյան, Բանակի դերը Թուրքիայի տանեական համակարգում. - Հայկական բանակ, 4 (50), 2006, էջ 67-74; Արմեն Ավագյան, Թուրք ազգայնամունքի գործունեությունն Ադրբեյջանում 1990-1994 թթ.. - Հայկական բանակ, 3 (49). 2006, էջ 48-56;

յանի¹⁷, Անուշ Հովհաննիսյանի¹⁸, Միքայել Մելքոնյանի¹⁹, Վահրամ Տեր-Մաթևոսյանի²⁰, Սուրեն Բաղրամյանի²¹ արժեքավոր հետազոտությունները: Թուրքիայի նորագոյն պատմության ուսումնային մեծապես նպաստում են Արևելագիտության ինստիտուտի կողմից հրատարակվող «Մերձավոր և Միջին Արևելքի Երկրներ և ժողովուրդներ» և «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ» մատենաշարերը:

Խորիդային հեղինակների շարքում կարելի է նշել Վ. Դանիլովին, Ա. Ակսենտենկոյին, Ա. Կողեսնիկովին, Վ. Զապորոժեցիյին, Ն. Կիրիլիկին²²: Ատենախատության մեջ բարձրացվող խնդիրների լուսաբանմանը հատկապես նպաստել են անվանի բուրքագետ Վ. Դանիլովի աշխատությունները՝ նվիրված Թուրքիայում ռազմական հեղաշրջումներին և քաղաքական գործընթացներին:

Արևմտյան հեղինակների առավել արժեքավոր աշխատությունների շարքում կարելի է առանձնացնել Ջորջ Ո. Հարրիսի, Ջեկոր Լանդաուի,

¹⁷ Ринсими Корхмазян, Турция и СССР (Россия): Некоторые проблемы взаимоотношений после Второй мировой войны. - Ученый вестник Арևելքի Երկրներ և ժողովուրդներ (XVIII). Ер.: Զանգակ-97, 1999, էջ 5-15;

¹⁸ Անուշ Հովհաննիսյան, ԽԱՀՍ-ի փլազումը, «Քրոր միասնության» գաղափարը և Ղարաբաղյան հարցը (1990-1995-ականների թուրքական իրապարակումների լուսաբանմանը). - Սերմանը Արևելքի Երկրներ և ժողովուրդներ (XX). Ер.: Զանգակ-97, 2001, էջ 74-81; Անուշ Օգանեսյան, К оценке историографии проблем идеологии турецкого национализма. - Սերմանը և Միջին Արևելքի Երկրներ և ժողովուրդներ XXIII. Ерևան: Զանգակ-97, 2004, էջ 148-157;

¹⁹ Ս. Մելքոնյան, Զինվորականության դերը Թուրքիայի քաղաքական կյանքում. - Զինվոր, 1993, էջ 10-20;

²⁰ Vahram Ter-Matevosyan, The Kemalist discourse in Turkey between 1960 and 1980: Challenging the Republican ideology ?. - Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ. Երևան: Ասովիկ, 2006, էջ 85-102; Վահրամ Տեր-Մաթևոսյան, Նեշմերին Էրբարանի բաղականացները և առաջնորդները (XX). Ер.: Զանգակ-97, 2001, էջ 74-81; Անուշ Օգանեսյան, К оценке историографии проблем идеологии турецкого национализма. - Սերմանը և Միջին Արևելքի Երկրներ և ժողովուրդներ XXIII. Ерևան: Զանգակ-97, 2004, էջ 148-157;

²¹ Ս. Բագդասարյան, Ռоль армии в процессе модернизации Турции в 1960-1990-х годах. - Սերմանը Արևելքի Երկրներ և ժողովուրդներ (XXI). Ер.: Զանգակ-97, 2002, էջ 28-39; Սուրեն Բաղրամյան, Արդիականացներ և իսլամատենյուրդներ (XXV). Երևան: Զանգակ-97, 2006, էջ 177-19;

²² Ս. Բագդասարյան, Համակարգության մոդեռնացման առաջնորդները (XXI). Ер.: Զանգակ-97, 2002, էջ 28-39; Սուրեն Բաղրամյան, Արդիականացներ և իսլամատենյուրդներ (XXV). Երևան: Զանգակ-97, 2006, էջ 177-19;

²³ Ս. Բագդասարյան, Համակարգության մոդեռնացման առաջնորդները (XXI). Еր.: Զանգակ-97, 2002, էջ 28-39; Սուրեն Բաղրամյան, Արդիականացներ և իսլամատենյուրդներ (XXV). Երևան: Զանգակ-97, 2006, էջ 177-19;

²⁴ Վ. Ի. Данилов, Турция 80-х: от военного режима до "ограниченной демократии". Москва: Наука, 1991; Վ. Ի. Данилов, Политическая борьба в Турции: 50-е - начало 80-х годов XX в. (политические партии и армия). Москва: Изд. Наука, 1985; Վ. Ի. Данилов, Государственно-административная деятельность военного правительства Турции. - Специальный бюллетень, № 2 (224), Москва, 1983; А. Г. Аксененко, Борьба политических партий Турции за влияние на молодежь 1920-1980. Москва: Изд. Наука, 1986; В. М. Запорожец, А. А. Колесников, Турция: Общество и армия, том I. Ленинград, 1983; Н. Г. Киреев, Борьба с террором в Турции. - Исламизм и экстремизм на Ближнем Востоке. М., 2001, стр. 72-110;

Ուլյամ Հեյլի, Հյու Փուլքոնի, Զոն Սարֆարդենի աշխատանքները²³: Բանակ-հասարակություն փոխարարելությունների հետազոտման համար օգտակար են եղել Էրիկ Նորվինգերի²⁴ և Սորիս Յանովիչի²⁵ աշխատությունները:

Մեր հետազոտության համար առանձնակի կարևորություն ունեն բոլոր հեղինակների աշխատությունները, որոնք աչքի են ընկնում փաստավավետագրական նյութի հարաստությամբ: Առավել արժեքավոր աշխատությունների շարքում կարելի է նշել Մեհմեթ Ալի Բիրանդի²⁶, Հասան Ջեմալի²⁷, Զյունեյր Արջայուրեքի²⁸, Ալի Բայրամօղուի²⁹, Էրբուլուլ Ալարլյահի³⁰, Թանել Գևմիրեկի³¹, Սոներ Յանովիչի³², Էրբիլ Շուշրուկայի³³, Էրբիլ Շուշրուկի³⁴, Իսմայիլ Զեմի³⁵, Դողման Օզբուլումի³⁶, Դողման Արյա-

²³ George S. Harris, The Role of the Military in Turkish Politics. - The Middle East Journal, Vol. 19, No. 1, Winter 1965, pp. 54-66; George S. Harris, The Causes of the 1960 Revolution in Turkey. - The Middle East Journal, Vol. 24, No. 4, Autumn 1970, pp. 438-454; Jacob M. Landau, The Nationalist Action Party in Turkey. - Journal of Contemporary History, Vol. 17, No. 4, Oct., 1982, pp. 587-606; William Hale, Turkish Politics and the Military. London: Routledge, 1994; Hugh Poulton, Top Hat, Grey Wolf and Crescent, Turkish Nationalism and the Turkish Republic. New York: New York University Press, 1997; John M. McFadden, Civil-Military Relations in the Third Turkish Republic. - The Middle East Journal, Vol. 39, No. 1, Winter 1985, pp. 69-85;

²⁴ Eric Nordlinger, Soldiers in Politics: Military Coups and Governments. New Jersey: Prentice Hall, 1977;

²⁵ Morris Janowitz, The Military in the Political Development of New Nations. Chicago: The University of Chicago, 1965; Morris Janowitz, Political Conflict, Essays in Political Sociology. Chicago: Quadrangle Books, 1970;

²⁶ Mehmet Ali Birand, Hikmet Bilâ, Ridvan Akar, 12 Eylül: Türkiye'nin Miladı. İstanbul: Doğan Kitapçılık, 1999; Mehmet Ali Birand, 12 Eylül Saat: 04:00. İstanbul: Karacan Yay., 1984; Mehmet Ali Birand, Emret Komutanim. İstanbul: Milliyet Yayın, 1986;

²⁷ Hasan Cemal, Tank Sesiley Uyanmak, 12 Eylül Günlüğü. İstanbul: Bilgi Yay., 1986; Hasan Cemal, Kimse Kızmasın Kendimi Yazdım. İstanbul: Doğan Kitapçılık, 2001; Hasan Cemal, Kurtler. İstanbul: Doğan Kitapçılık, 2003;

²⁸ Cüneyt Arcayürek, Demokrasinin Sonbaharı, 1977-1978. Ankara: Bilgi Yay., 1985; Cüneyt Arcayürek, Bir İktidar Bir İhtilal 1955-1960, Açıklıyor-3. Ankara: Bilgi Yayın., 1984;

²⁹ Ali Bayramoğlu, Asker ve Siyaset. - Bir Zümre, Bir Parti. Türkiye'de Ordu. İstanbul: Bilirkim Yayın., 2004, s. 59-118;

³⁰ Ertuğrul Alatlı, Mühale 12 Mart 1971-12 Eylül 1980. İstanbul: Alfa Yayın., 2004;

³¹ Tanel Demirel, Türk Silahlı Kuvvetleri'nin Toplumsal Meşruiyeti Üzerine. - Bir Zümre, Bir Parti. Türkiye'de Ordu. İstanbul: Bilirkim Yayın., 2004, s. 345-381; Tanel Demirel, Lessons of Military Regimes and Democracy: The Turkish case in a Comparative Perspective. - Armed Forces & Society, Vol. 31, No. 2, Winter 2005, pp. 245-271; Tanel Demirel, The Turkish Military's Decision to Intervene: 12 September 1980. - Armed Forces & Society, Vol. 29, No. 2, 2003, 253-280;

³² Soner Yalçın & Doğan Yurdakul, Bay-Pipo. İstanbul: Doğan Kitapçılık, 2000; Soner Yalçın & Doğan Yurdakul, REİS, Gladio'nun Türk Tetikcisi. Ankara: Öteki Yay., 1998;

³³ Erbil Tuşalp, Eylül İmparatorluğu. Doğuş ve Yükselişi. İstanbul: Bilgi Yay., 1988;

³⁴ İsmail Cem, Siyaset Yazılıları, 1975-80 Türkiyesi. İstanbul: Cem Yayın., 1980; İsmail Cem, Türkiye'de Geri Kalmışlığın Tarihi. İstanbul: Cem Yayın., 1971;

³⁵ Ergen Özbuðu, Türk Anayasası Hukuku. Ankara: Yetkin Yayın., 2005;

զի³⁶ գործերը: Պետք է նշել, որ բոլոր հեղինակների մոտ, կապված նրանց քաղաքական նախապատվությունից, նյութերի ընտրողական մոտեցում է նկատվում:

Ատենախոսության մեջ լայնորեն օգտագործվել է ժամանակի բոլոր քաղաքական մամուլը: Քննարկվող թեմաների լուսաբանմանը մեծապես նպաստել են նաև վերջին տարիների ընթացքում բոլոր քաղաքական մամուլի էջերում տեղ գտած իրավարակումները, ինչպես նաև հեղաշրջման մասնակիցների հարցազրույցները, որոնք ուղարկած են կապված նորանոր ուշագրավ փաստեր են առաջ բերում և լույս են պահում բազմաթիվ մուր էջերի վրա:

ԱՇԽԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է առաջարանից, չորս գլուխներից, վերջարանից և օգտագործված աղյուրների և գուշանուրյան ցանկից:

Ներածության մեջ խոսվում են բեմայի արդիականության, ուսումնամիարության նպատակների մասին, պարզաբանվում աշխատանքի մերողաբանական հիմքը և գիտական նորույթը, իմնավորվում աշխատանքի գործնական նշանակությունը, ներկայացվում՝ օգտագործված աղյուրների և գրականության համառոտ տեսությունը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍՐՈՒԴՔԱՅԱՅՈՒՄ 1970-ԱՎԱՆ ԹԹ. ՎԵՐՉԵՐԻՒՄ», իր հերթին բաղկացած է երեք ենթաքաղաքներից: «Միջկոսակցական պայքարը և քաղաքական համակարգի զգանաժամք» ենթաքամում քննարկվում է 1970-ական թթ. Թուրքիայում քավականին բուռն զարգացումներով հարուստ քաղաքական անցուղաձը, ներկայացվում քաղաքական քատերաբեմի վրա գործող հիմնական կուսակցությունների գործունեությունը և երկրում ծավալված միջկոսակցական անգիծում պայքարը: Քննարկվող ժամանակաշրջանում երկրի երկու խոշորագույն քաղաքական կուսակցությունների (Ժողովրդա-հանրապետական կուսակցություն և Արդարություն կուսակցություն) միջև եղած անհանդուրդողականության մքննուրսը գործնականության անհնար էր դարձել նրանց միջև քաղաքական համաձայնությունը և այդ կուսակցությունները կուպիցիոն կառավարություն ձևավորելու գործընթացի մեջ ստիպված էին լինում ներգրավել փոքրարիկ խորիդարանական ուժերին, այդ թվում իսլամական և ազգայնամուլական ուղղվածության: Ստեղծվել էր մի իրավիճակ, երբ երկրի խոշորագույն

³⁶ Doğan Akyaz, Askeri Mühalelerin Orduya Etkisi, Hiyerarşi Dışı Örgütlenmeden Emir Komuta Zincirine. İstanbul: İletişim Yayın., 2002;

կուսակցությունները քազմաքիվ զիջումների էին գնում այդ ուժերին՝ կուլիշին կառավարությունը պահելու համար և հաճախ կառավարության գոյությունը կախված էր լինում քաղաքական կուսակցություններից, ոյտնը ներկայացված էին խորհրդարանում ընդամենը մի քանի պատգամավորով։ Այդ հանգամանքը մեծապես նպաստում էր կառավարությունների կարճատևությանը (1973 թ-ից մինչև 1980 թ. սեպտեմբերի 12-ի ուազմական հեղաշրջումն ընկած ժամանակահատվածում երկրում գործել է 8 կառավարություն)՝ նվազեցնելով նրանց արդյունավետությունը և պատճառ հանդիսանալով ներքաղաքական ճգնաժամների։ Քաղաքական ճգնաժամը հատկապես ընդգծվեց 1980 թ. նախագահական ընտրությունների ժամանակ, երբ ավելի քան 5 ամիս խորհրդարանն այդպես էլ չկարողացավ նախագահ ընտրել։ 1980 թ. ուազմական հեղաշրջումից հետո հեղաշրջման դեկավար Զենան Էվրենը նշեց, որ «աշխարհի ոչ մի երկրում նախագահի պաշտոնի և ընտրության նկատմամբ այդքան բերևամիտ (*haftif*) չեն վերաբերվել»³⁷։ Ստեղծված իրավիճակում երկրի քաղաքական համակարգն ի գործ չէր երկիրն ինքնուրույն դրուս բերել ճգնաժամից և նույնիսկ քաղաքական գործիչներն իին նշում քաղաքական համակարգի սմանկության և ճգնաժամից դրուս գալու անկարողության մասին³⁸։

Երկրորդ ենթարաֆինը վերնազրված է «Հսկամական գործողություն ուստի ուազմական հեղաշրջման պատճառ»։ Թուրքիան թեև իր բնույթով աշխարհիկ պետություն է, այնուամենայնիվ, կրոնի ազդեցությունը նրա հասարակական-քաղաքական կյանքում չափազանց մեծ է, և բուրքական պետության զարգացման տարբեր փուլերում կրոնի դերն ու նշանակությունը փոփոխվում է՝ կապված տարբեր հանգամանքներից։ Եվ, եթե հանրապետական Թուրքիայի առաջին տասնամյակներում իշլամական շարժումն իշխանությունների կողմից դիտարկվում էր որպես հանրապետական կարգերի զիսավոր սպառնալիք և դաժան հալածանքների էր ենթարկվում վերջինս կողմից, ապա 40-50-ական թթ. կոմունիստական սպառնալիքի ի հայտ գալով, այն իր այդ դերը զիջեց ձախակողմյան շարժումներին։ Դեռ ավելին՝ իշխանությունները փորձեցին կրոնն օգտագործել որպես այլընտրանք կոմունիստական գաղափարախոսությանը, որի

³⁷ Evren'in Radyo-Televizyon Konuşması. (12 Eylül 1980). - T.C. Devlet Başkanı Orgeneral Kenan Evren'in Söyley ve Demeçleri. Ankara: Başbakanlık Basımevi, 1981, s. 10-13;

³⁸ Հատկանշական է «Պետական հեղաշրջում. ուսզմավարություն և տեխնոլոգիաներ» հետազոտության հեղինակ Օլեգ Գլազունովի այն տեսակետը, որ առանց իշխանության համակարգին ճգնաժամի ուսզմական հեղաշրջումն անհնար է։ Օլեգ Գլազունով, Գосударственныи переворот. Стратегия и технология. М.: ОЛМА-ПРЕСС образование, 2006, стр. 84;

արդյունքում կրոնական շարժումներն իշխանությունների կողմից քազմականություններ ստացան։ Այդ ամենը նպաստեց, որ 1970-ական թթ. իշլամական շարժումներն սկսեցին վերելք ապրել։ Սակայն, քննարկվող ժամանակահատվածում բուրքական զինվորականության նոր նուհողություններ էր առաջացնում իշլամականների գործունեությունը։ Թուրքիայում ուազմական ուսումնարանի կորսանտը՝ ապագա սպան, իր ուսման առաջին խոր օրից դաստիարակվում է քենալիզմի սկզբունքների ողով, որոնցից հատկապես կարևորվում է լայիցիզմի (աշխարհիկություն) սկզբունքը³⁹, և ամեն տեսակի ուսումնագործություններ լայիցիզմի հանդեպ անլուգունելի է զինվորականության համար, իսկ այդպիսի 1970-ական թթ. շատ էին երկրի քաղաքական-հասարակական կյանքում։ Իրանի Իսլամական հեղափոխությունը և նրա հնարավոր արտահանման սպառնալիքն ստիլեց բուրքական բարձրաստիճան զինվորականությանը և Թուրքիայի արևմտյան դաշնակիցներին նորովի նայել մեծ քափ հավաքած իշլամական շարժումներին։ Իսլամամետ Ազգային փրկություն կուսակցության գործունեության վելիքը, ինչպես նաև լայն տարածում ստացած տեղեկություններն այն ճամփին, որ Թուրքիայում գործում էին մի շարք գաղտնի կազմակերպություններ, որոնց նպատակն էր աշխարհիկ հանրապետական կարգի տապալումը, ավելի իրատեսական էին դարձնում իրանական հեղափոխական այլիքի հնարավոր արտահանման նույնականությունները։ Այս խումը, իսլամական շարժումների վերելքն սկսում էր վտանգ ներկայացնել քենալիզմի զարգացման համայնքության հիմնայունը հանդիսացող լայիցիզմին։ Զինվորականների կողմից ուազմական հեղաշրջման նախապատրաստման մեջ ահանգամնը կարևոր խրան հանդիսացավ։

Սուաջին գլխի վերջին՝ երրորդ, ենթարաֆին ներկայացվում է՝ «Զախերի ակտիվացումը երկրի քաղաքական կյանքում», քննության առնվում՝ մեծ քափ հավաքած ձախակողմյան արհմիությունների գործունեությունը և գործադրության ալիքի ահազմացումը։ 1970-ական թթ. ձախակողմյան շարժումների հիմնական ձեռքբերումն աշխատավորական շարժման քաղաքականացումն ու գործադրության զանգվածային շարժման կազմակերպումն էր, որը հատկապես երկրի խոշոր ձեռնարկատերերի նոր լուրջ ահանգստությունների պատճառ դարձավ։ Ինչպես վկայում է հայտնի բուրք լրագրող Մեհմեր Ալի Բիրանը, 1970-ական թթ. Վերջերին մուրթիայի խոշոր ձեռնարկատերերը խուճապի մեջ էին և գտնում էին, որ կոմունիզմը կանգնած է երկրի շեմին⁴⁰։ Նրանցից շատերն իրենց ունեցվածքն

³⁹ Mehmet Ali Birand, 12 Eylül Saat: 04:00. İstanbul: Karacan Yay., 1984, s. 38;

⁴⁰ Mehmet Ali Birand, 12 Eylül Saat: 04:00. İstanbul: Karacan Yay., 1984, s. 72;

Էժան գներով վաճառում և հեռանում էին երկրից⁴¹: Թուրքիայի խշոր ձեռնարկատերները երկրում կայունություն հաստատելու և «Հունվարի 24-ի»⁴² բարեփոխումների ծրագրի իրականացման համար լավագույն միջոց տեսնում էին բանակի միջամտությունը և սկսեցին ամեն կերպ խրախուսել բարձրաստիճան զինվորականությանը հեղաշրջում իրականացնելու համար: Այսուղ հարկ է նշել նաև մի կարևոր հանգամանը ևս, այս է՝ Քանակի փոխօգնության միուրյունը (*Ordu Yardımlaşma Kurulu*-ՕՅԿ), որն ապահովում էր գեներալների նյութական բարեկեցությունը, 1970-ական թթ. Թուրքիայի 4 խոշորագույն և ճյուղավորված մասնավոր ընկերություններից էր, հետևաբար ճախ շարժման զարգացումը և գործադրության ալիքի ահազնացումն ուղղակիորեն սպառնում էր նաև զինվորական վերնախավի ֆինանսական շահերին:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է «ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԱՃՀ 1970-ԱԿՄՆ ԹԹ.» և հետազոտում է 1970-ական թթ. երկրում մեծ թափ հավաքած ահարեկչությունը: 1970-ական թթ. ահարեկչությունը Թուրքիայում զանգվածային բնույթ էր կրում, որի արդյունքում արդեն 1970-ական թթ. վերջերին օրական 20 մարդ էր սպանվում: Ահարեկչության զիսավոր նախաձեռնողները «գորշ գայլերի» պանցյուրիստական շարժումն ու ճախակողմյան ժայրահեղական կազմակերպություններն էին:

Սուաջին՝ «Գորշ գայլերի շարժումը» ենթարածնում, մասնաւասն քննության են առնվում պանցյուրիստական «գորշ գայլերի» ստեղծման և հղորացման գործընթացը, բացահայտվում են նրանց փոխսհարաբերությունները երկրի իշխանությունների հետ, հետազոտում «գորշ գայլերի» ահարեկչական գործունեությունը և դրա իրական նպատակները:

1970-ական թթ. «գորշ գայլերը» ահարեկչական գործողությունները սկսեցին ծավալել երկրի ողջ տարածքով մեկ՝ որպես թիրախ ընտրելով ճախակողմյան ուժերին: 1970-ական թթ. կեսերից «գորշ գայլերի» բարձրական բարձրագույն կազմակերպությունը՝ Ազգայնական շարժում կուսակցությունը (հետայսու՝ ԱՇԿ), մաս կազմելով իշխանական Ազգայ-

⁴¹ Mehmet Ali Birand, 12 Eylül Saat: 04:00. İstanbul: Karacan Yay., 1984, s. 72;

⁴² 1970 թ. հունվարի 24-ին Ս. Դեմքրեի կառավարությունն ընդունեց «առնետառիթյան կայունացման» ծրագիրը, որը նախատեսում էր լայնածավալ տնտեսական բարեփոխումների հիմանացում. Բարեփոխումների զիսավոր նպատակն էր ստեղծել «ազատ շուկա», նվազեցնելով պետության դեղու տնտեսության մեջ, բազմաթիվ արտոնություններ վերապահել մասնավոր սեփառորին, նպաստավոր պայմաններ սպահուել օտարերկրյա ներդրողների հանար, վերջ դնել լիրայի արժեգրկմանը, լճացմանը և այլն: «Հունվարի 24-ի» ծրագրի հիմնական սկզբունքները ծևակերպվել էին վարչապետի՝ տնտեսական գծով խորհրդական Թուրքուր Օզալի կողմից՝ ԹՀՈՒՄՀ-ի (TÜSİAD - Թուրքական ծենարկատերների և գործարար մարդկանց միուրյուն) և արևմտյան ֆինանսական կազմակերպությունների՝ մասնավորապես Արժույրի միջազգային իիմնադրամի որոշչի աջակցությամբ:

նական ճակատ կուալիցիային, ամեն կերպ խրանում էր «գորշ գայլերի» ներքափանցումը երկրի կառավարման համակարգ, ինչը մեծապես նպաստեց նրանց հղորացման գործընթացին: Արդեն 1970-ական թթ. վերջերին «գորշ գայլերի» կազմակերպությունը վերածեց հղոր ուժի և սկսեց պայքարել իշխանությունները դարձրեց զանգվածային՝ նպատակ հետապնդելով ապակյառնացնել երկրի ներքին որությունը, ինչը պարարտ հող էր նախապատրաստում իշխանությունը զավելու համար: ԱՇԿ-ի նախկին փոխնախագահ Արզա Սյուֆրյուլուն իր՝ վերջերս հրատարակած «Մահակների զինվորները» (*Copların Askerleri*) գրքում նշում է, որ 1980 թ. ռազմական հեղաշրջումից առաջ քանակում մի քանի խմբագրություն կար, որոնցից մեկը գտնվում էր «գորշ գայլերի» շարժման առաջնորդ Ալփարյան Թյուրքեջի ազդեցության տակ⁴³: Թյուրքեջն այլ խմբագրման միջոցով, որը զիսավորում էր գեներալ զնդագետ Սուար Իբրահիմը, ռազմական հեղաշրջում էր նախապատրաստում՝ երկրում ֆաշիստական դիկտատուրա հաստատելու նպատակով, որից հետո «մեկ ազգ, մեկ պետություն» կարգախոսով բոլոր բյուրքակեզու ժողովուրդներին մեկ՝ «Թուրքան» պետության մեջ համախմբելու էր լինելու: Եթե ավելացնենք նաև այն հանգամանքը, որ ըստ որոշ տվյալների՝ «գորշ գայլերը» 1970-ական թթ. վերջին կարծ ժամանակահատվածում կարող էին մորթիլզացնել նույն 200 հազար զինված համակիրների⁴⁴, կարելի է եզրակացնել, որ իրավիճակի նմանօրինակ զարգացման պարագայում Թյուրքեջն իրական հնարավորություն կունենար իշխանությունը զավելու համար: Սակայն զինվորականության հերքական միջամտությունը Թուրքիայի քաղաքական անցուղարձին խառնեց Թյուրքեջի բոլոր խաղարիքերը՝ ի շիք դարձնելով իշխանությունը զավելու նրա նպատակը: Ժեն 1980 թ. ռազմական հեղաշրջումը մեծ հարված հասցերեց «գորշ գայլերի» շարժմանը, այսուամենայնիվ, այն վերջնական և մահացու չէր: Հեղաշրջման հեղինակները ամենենին էլ չին ցանկանում ամբողջովին զախշախել «գորշ գայլերի» շարժումը (ինչպես դա տեղի ունեցավ ճախակողմյան ժայրահեղական շարժումների դեպքում) և երբ «գորշ գայլերը» դադարեցին վտանգ ներկայացնել զինվորականների իշխանության համար, սկսեցին նորից օգտագործվել այդ նույն զինվորականության կողմից:

⁴³ Rıza Müftüoğlu, *Copların Askerleri*. Ankara: Ocak Yay., 2000, s. 18;

⁴⁴ P. Сафрастян, Возвращение “серых волков”: Консервативная партия в политической жизни Турции (1983-1985 гг.). - Уժը ավագ Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIII. Երևան, 2004, էջ 256;

Երկրորդ ենթագլխում ներկայացվում է «Զախակողմյան ծայրահեղական կազմակերպությունների ահարենքական գործունեությունը»: 1970-ական թթ. Վերջերին Թուրքիայում գործուն էին մոտ 60 ձախակողմյան ծայրահեղական կազմակերպություններ՝⁴⁵, որոնց գլխավոր նպատակը զինված հեղափոխությունն էր: Զախակողմյան ծայրահեղական կազմակերպություններից առավել ազդեցիկ էին հետևյալներ՝ ԹՀՔՓ-ԹՀՀՁ (Türkiye Halk Kurtuluş Partisi- Türkiye Halk Kurtuluş Cephesi - Թուրքիայի ազգային ազատազրական կուսակցություն, Թուրքիայի ազգային ազատազրական ճակատ), ԴԵՎ-ՍՈԼ (Devrimci Sol, Հեղափոխական ճախ), ԴԵՎ-ՅՈԼ (Devrimci Yol - Հեղափոխական ուղի), ԹԻՔՔՕ (Türkiye İşçi Köyü Komunist Ordusu - Թուրքիայի աշխատավորական զյուղացիական կոմունիստական բանակ) և այլն: Թես ձախ ծայրահեղականները բաժանված էին տարրեր խմբավորումների, ինչն անկասկած բուլացնում էր նրանց հնարավորությունները, այնուամենայնիվ, ձախակողմյան ծայրահեղական կազմակերպությունները Թուրքիայի ողջ տարածքում լայնածավալ ահարենքական գործունեություն էին ծավալել, ինչը լուրջ նոտահոգություններ առաջացրեց բարձրաստիճան զինվորականների մոտ:

Աշխատանքի երրորդ գլուխը վերնագրված է «ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի ՌԱԶՍՍԿԱՆ ՀԵՂԱԾՇՋՈՒՄ»: Առաջին ենթաքամում հետազոտվում է «Քանակի դերը Թուրքիայի քաղաքական կյանքում»: Այստեղ լայնորեն ուսումնասիրվում է քանակ-հասարակություն փոխարաբերությունների բուրքական մողելը, քննորյան են առնվում 1960 թ. ռազմական հեղաշրջումը և 1971 թ. գինվորականների «միջամտությունը», ներկայացվում դրանց ազդեցությունը քանակի՝ որպես քաղաքական գործոնի ձևավորման գործընթացի վրա:

Քանակ-հասարակություն փոխարաբերությունների համակարգում կատարված հետազոտությունների մեջ լայն տարածում է ստացել Էրիկ Նորդլինգերի տեսությունը, ըստ որի՝ քանակ-հասարակություն փոխարաբերությունները, երբ զինվորականները ենթարկվում են քաղաքացիական իշխանություններին, կարելի է քաժանել երեք խմբի՝ ավանդական (traditional), ազատական (liberal) և ներքափանցող (penetration)⁴⁶: Քանակ-հասարակություն փոխարաբերությունների ավանդական մողելի ժամանակական է, գտնվում է մեկ դեկավարի ձեռքում, ով հիմնականում ազնվական ծագում ունի (ին-

պես օրինակ՝ միջնադարյան միապետությունները): Ազատական մողելի դեպքում բանակն ապարադաքանացված է, զինվորականներն անվերապահորեն ենթարկվում են քաղաքացիական իշխանություններին՝ անկախ վերջիններիս քաղաքական և զաղափարական ուղղվածությանը (տարածված է արևմտյան երկրներում): Բանակ-հասարակություն փոխարաբերությունների ներքափանցող մողելի ժամանակը սերտորեն փոխակապակցված է իշխանությունների հետ և բանակում տարածված է իշխող կուսակցության զաղափարախոսությունը: Այդ դեպքում բանակը քաղաքականացված է և պայքարում է իշխող ուժիմի զաղափարախոսության համար⁴⁷ (Խորհրդային Սյուրյան տարրերակը): 1960-1970-ական թթ. Թուրքիայում բանակ-հասարակություն փոխարաբերությունները, ըստ վերը նշված տեսության, կարելի է բնութագրել որպես ներքափանցող մողելի բանակը Թուրքիայի քաղաքական կյանքում առանցքային նշանակություն ուներ, քաղաքականացված էր, ակտիվորեն մասնակցում էր երկրի քաղաքական անցուղարձին և հանդես էր գալիս որպես երկրի պաշտոնական զաղափարախոսության՝ քենալիզմի հիմնական պաշտպան:

Երրորդ գլխի՝ «Ռազմական հեղաշրջման նախապատրաստումը և ընթացքը» վերնագրված երկրորդ ենթաքամում, ներկայացվում են ռազմական հեղաշրջման նախապատրաստման և իրականացման գործընթացի մանրամասները: 1980 թ. ռազմական հեղաշրջումը միանգամից ծննվեց, այն երկար նախապատրաստած և մանրամասն ծրագրավորված գործողությունների ծնունդ էր⁴⁸:

1980 թ. սեպտեմբերի 12-ին բուրքական բանակն իրականացրեց ռազմական հեղաշրջում, որի արդյունքում երկրի ամրող իշխանությունն անցավ նորաստեղծ Ազգային անվտանգության խորհրդի ձեռքը (Milli Güvenlik Konseyi, այսուհետև՝ ԱԳԽ): Սեպտեմբերի 12-ի առավոտյան ժամը 04:00-ին բուրքական հետուատանությամբ հնչեց ռազմական ուսումնարանի քայլերը, որից հետո ընթերցվեց ԱԳԽ-ի առաջին հայտարարությունը, որտեղ նշվում էր, որ «երկրի և ազգի միասնության պահպանման, հնարավոր քաղաքացիական պատերազմի կանխման, պետության և նրա հեղինակության վերականգնման» նպատակով բուրքական բանակը «կատարելով պարտը» իր ձեռքը է վերցնում երկրի ամրող իշխանությունը⁴⁹: Բացառապես զինվորականներից կազմված ԱԳԽ-ի ռազմական դրույթն մոցրեց մի շարք շրջաններում և նշանակեց հրամանատարներ՝ տեղերում իշխանու-

⁴⁵ Cumhuriyet, 08 Şubat 1981;

⁴⁶ Eric Nordlinger, Soldiers in Politics: Military Coups and Governments. New Jersey: Prentice Hall, 1977, pp. 10-19;

⁴⁷ Eric Nordlinger, Աշխ. աշխ., էջ 10-19;

⁴⁸ William Hale, Turkish Politics and the Military. London: Routledge, 1994, p. 232;

⁴⁹ Milli Güvenlik Konseyi'nin 1 Numaralı bildirisi. - Resmi Gazete, 12 Eylül 1980;

բյունն իրականացնելու նպատակով: Զինվորականները լուծարեցին ԹԱՄԾ-ը և կառավարությունը, դադարեցրին կուսակցությունների, կազմակերպությունների, արհմիությունների (բացառությամբ պետության վերահսկողության տակ գտնվող Թյուք-Իշ-ի) գործունեությունը, արգելեցին ցույցերն ու գործադրությունը և այլն: Այսպիսով, վերջին 20 տարիների ընթացքում արդեն երրորդ անգամ բուրքական բանակն ուղղակիորեն միջանուց երկրի քաղաքական կյանքին՝ իրականացնելով ռազմական հեղաշրջում:

Երրորդ գլխի վերջին ենթաքանում ուսումնասիրվում է «Արտաքին գործողություն» ռազմական հեղաշրջման մեջ: Սառը պատերազմի տարիներին Թուրքիան բացահայտ արևմտամետ քաղաքականություն էր իրականացնում: Թուրքիայի ղեկավարները երկրի ընդգծված արևմտամետ արտաքին քաղաքականության անթափելության հիմնավորման որպես զիսավոր կովան նշում էին Խորհրդային Սիոնքյան սպառնավիրը⁵⁰: Աշխարհագրական դիրքը կարևորում էր Թուրքիայի նշանակությունն արևմտյան երկրների՝ մասնավորապես ԱՍՆ-ի համար, և Արևմտյան կողմն իր հերքին շահագրգության մեջ էր Թուրքիային տեսնել իր ճամբարում: Սառը պատերազմի տարիներին ԱՍՆ-ը մեծածավալ ֆինանսական և ռազմական օգնություն էր հատկացնում Թուրքիային: Սակայն, 1970-ական թթ. ամերիկյան դիրքերը Թուրքիայում զգալիորեն բուլացան, ինչը հիմնականում պայմանավորված էր այն հանգամանքով, որ նվազել էր Թուրքիայի նշանակությունն արևմտյան պետությունների՝ մասնավորապես ԱՍՆ-ի համար: Ամերիկյան իշխանական շրջանակներում այդ ժամանակաշրջանում, որպես տարածաշրջանային առաջնային երկիր, դիտարկվում էր Իրանը: 1974-1983 թթ. Թուրքիայում ԽՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան Ա. Ռուխոնվը գրում է, որ մինչև Իրանի Իսլամական հեղափոխությունը «տպավորությունն այնպիսին էր, որ Թուրքիայի նշանակությունը Պենտագոնի համար նվազում էր. Անկարայում փակվում էին մի շարք ամերիկյան ռազմական բազաներ, միաժամանակ Իրանում ուժեղանում էր ամերիկյան ռազմական դիրքերի ամրապնդումը»⁵¹, սակայն Իրանում Իսլամական հեղափոխությունն ամբողջովին փոխեց իրավիճակը և նոր իրողություններ առաջացրեց: Միացյալ Նահանգներում ստիպված էին տարածաշրջանում դիրքերը վերականգնելու նոր ուղիներ փնտրել, ինչը հանգեցրեց Թուրքիայի դերի կտրուկ աճին: ԱՍՆ-ի իշխանական շրջանակներում Թուրքիայում ռազմական հեղա-

շրջման անիրաժեշտությունն առաջին անգամ սկսեց քննարկվել 1979 թ. սկզբներին⁵²: Հատկանշական է, որ հեղաշրջման անիրաժեշտությանը պնդում էին Պենտագոնը և Կենտրոնական հետախուզական վարչությունը, իսկ վաշինգտոնյան իշխանական շրջանակներն սկզբում դեմ էին արտահայտվում Թուրքիայում ռազմական հեղաշրջում իրականացնելուն⁵³: Վաշինգտոնում գտնում էին, որ պետք է ֆինանսական աջակցություն ցուցաբերել Էջմիածինի կառավարությանը՝ փորձելով ժողովրդավարական միջոցառումներով Թուրքիան դուրս բերել ճգնաժամից և կայունություն հաստատել երկրում: Սակայն Էջմիածինի կառավարության անարդյունավետ քաղաքականությունը և ուժային կառույցների որոշակի ճնշումները նպաստեցին Վաշինգտոնի դիրքորոշման փոփոխությանը և վաշինգտոնյան իշխանությունները համաձայնություն տվեցին ռազմական հեղաշրջում իրականացնելու համար⁵⁴: Այսպիսով, 1979 թ-ից սկսած ԱՍՆ-ում բուրքական բանակի ուղղակի միջամտությունը երկրի քաղաքական կյանքին դիտվում էր որպես Թուրքիայի արևմտականացման և կայունության հաստատման հիմնական և ամենաարդյունավետ միջոց: Այդ իրողություններում ԱՍՆ-ը քարտ բլանշ տվեց բուրքական բանակի իրամանատարությանը ռազմական հեղաշրջում իրականացնելու համար: Հատկանշական է տեղեկությունն այն մասին, որ 1980 թ. սեպտեմբերի 12-ին Թուրքիայում Կենտրոնական հետախուզական վարչության ներկայացուցիչ Փոլ Հենցը, զանգահարելու Սպիտակ տուն, գեկուցել է՝ «Մեր տղաները հեղաշրջում կատարեցին»⁵⁵:

Առենախոսության չորրորդ գլուխը՝ «ԱՆՑՈՒՍԱՅԻՆ ՇՐՋԱՆ» (1980-1983 թ-ի), ներկայացնում է ռազմական հեղաշրջումից հետո սկսված անցումային շրջանը: Առաջին բաժնում ներկայացվում են զինվորական իշխանությունների իրականացրած «Զանգվածային պատժամիջոցներ»-ը՝ լույս սփռում դրանց իրական նպատակների վրա:

1980 թ. ռազմական հեղաշրջումից հետո երկրի ամբողջ իշխանությունն անցավ անսահմանափակ իշխանությամբ օժտված Ազգային անվտանության խորհրդի ձեռքը և Թուրքիայում սկսվեց «անցումային շրջան»՝ ժամանակաշրջանը: 1980 թ. հեղաշրջման «անցումային շրջանը», նախորդ հեղաշրջման (1960 թ.) և զինվորականների «միջամտության» (1971 թ.) անցումային շրջանների համեմատ, բավականին երկար տևեց՝ ավելի քան երեք տարի: Դա հիմնականում պայմանավորված էր այն հանգամանքով, որ 1980 թ. ռազմական հեղաշրջման պատճառները խորն ու տարա-

⁵⁰ Mehmet Ali Birand, 12 Eylül Saat: 04:00. İstanbul: Karacan Yay., 1984, s. 193;

⁵¹ Soner Yalçın & Doğan Yurdakul, Bay-Pipo. İstanbul: Doğan Kitapçılık, 2000, s. 326;

⁵² Ibid.;

⁵³ Erdal Şimşek, Türkiye'de İstihbaratçılık ve MİT. İstanbul: Kum Saati Yayın., 2004, s. 357;

⁵⁴ Cumhuriyet, 20 Aralık 1972;

⁵⁵ А. А. Родионов, Турция-перекресток судьб. Воспоминания посла. Москва: Междунар. отношения, 2006, стр. 171-172;

բնույթ էին (ահարեկչություն, ձախ շարժում, ներքաղաքական ճգնաժամ, իսլամական շարժում, տնտեսական ճգնաժամ և այլն) և հեղաշրջումն ուղղված էր զիսափրապես մեկ կուսակցության կամ երևույթի դեմ, ինչպես դա տեղի ունեցավ 1960 թ. հեղաշրջման (հիմնականում ուղղված էր իշխող Դեմկրատական կուսակցության դեմ) և 1971 թ. զինվորականների «միջամտության» (նպատակ էր հետապնդում կանխել ավելի ցածր աստիճանակար ունեցող զինվորականների կողմից նախապատրաստվող ռազմական հեղաշրջումը) ժամանակ։ Հետևաբար զինվորականներից ավելի երկար ժամանակ էր պահանջվելու հեղաշրջման պատճառները վերացնելու համար։

«Անցումային շրջանում» (1980-1983 թ.) երկրում կարգության հաստատելը զինվորական իշխանությունների գլխավոր նպատակն էր հանդիսանում։ Կարգության հաստատելու որպես հիմնական միջոց քարձրագույն զինվորականների տեսանկյունից երկրի ողջ տարածքում զանգվածային պատժամիջոցների կիրառումն էր, և ռազմական հեղաշրջումից անմիջապես հետո զանգվածային ձերքակալություններ սկսվեցին։ Սկզբնական շրջանում ձերքակալությունների որպես գլխավոր թիրախ ընտրվեցին ճախակողմյան ծայրահեղական կազմակերպությունները և «գորշ զայլերի» ազգայնամոլական շարժման ակտիվիստները։ Դրանով զինվորականները փորձում էին կտրուկ միջոցներով վերջ դնել երկիրը կարգածահար անող ահարեկչությանը և բացառել այլ շարժումների կողմից հնարավոր հակադիցությունը։ Սակայն, զինվորական իշխանություններն ահարեկչության դեմ պայքարի բոլի տակ ձերքակալությունների և պատժամիջոցների լայնամասշտար գործողություններ սկսեցին, որոնց նպատակն էր «հարմար առիթը» օգտագործելով արմատախիլ անել «անցանկալի շարժումները»։ Զինվորականները ջախչախիչ հարված հասցրին այն շարժումներին, որոնք զինվորականների տեսանկյունից վտանգ էին ներկայացնում թեմական թուրքիայի համար։

Չորրորդ գլխի երկրորդ ներքագլուխը կրում է «Սահմանադրական վերափոխումներ. 1982 թ. սահմանադրությունը» վերնագիրը, որտեղ ուսումնասիրվում է զինվորական իշխանությունների անմիջական վերահսկողությամբ ընդունված սահմանադրությունը, դրա հիմնական ուղղությունները և միտումները։ Հանրապետական Թուրքիայի երրորդ՝ 1982 թ. սահմանադրությունը ժողովրդավարական իրավունքների և ազատությունների սահմանափակումներ առաջ բերեց։ Նոր սահմանադրությունն ուժինացրեց քանակի դերը երկրի քաղաքական կյանքում և կառավարման համակարգում, ինչը հնարավորություն էր ստեղծում զինվորական իրամանատարության համար իշխանությունը քաղաքական կուսակցություններին փոխանցելուց հետո

քաղաքական կյանքի վրա ազդելու վերահսկողական լծակներն իրենց ձեռքում պահելու։

Չորրորդ գլխի վերջին՝ «Անցում քաղաքացիական կառավարման» ենթաքաժնում ներկայացվում են զինվորական իշխանությունների անմիջական վերահսկողությամբ իրականացված քաղաքական համակարգի վերափոխումները, դրանց հիմնական առանձնահատկությունները, ուսումնասիրվում է նոր քաղաքական կուսակցությունների ձևավորման գործընթացը։ Ընուրյան են առնվազ իշխանությունը քաղաքացիական կուսակցություններին փոխանցելու զինվորականների գլխավոր նախապայմանները։

1980 թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումը, ըստ Էրիկ Նորդլինգերի տեսության⁵⁶, կարելի է բնորոշել որպես խնամակալ (*guardian*) ռազմական հեղաշրջում, այսինքն, զինվորականների իշխանությունը ժամանակավոր բնույթ էր կրում, նրանք ռազմական հեղաշրջում էին իրականացրել՝ պատճառները վերացնելու և իշխանությունը կրկին քաղաքացիական ուժերին վերադարձնելու նպատակով։ Սակայն, նախքան երկրի իշխանությունը քաղաքացիական ուժերին փոխանցելը՝ զինվորականները ձեռնամուխ եղան երկրում քաղաքական համակարգի վերափոխումները իրականացնելուն։ 1981 թ. հոկտեմբերի 16-ին զինվորական իշխանությունների կողմից, վերջին 120 տարիների ընթացքում առաջին անգամ, թուրքիայում արգելվեցին բոլոր քաղաքական կուսակցությունները։ Այդ քայլը հիմնականում ուղղված էր նախքան հեղաշրջումը գործող քաղաքական կուսակցությունների և դրանց ղեկավարների դեմ։ Երանց գրկելով երկրում ծավալվելիք քաղաքական գործընթացներին մասնակցելու հնարավորությունից։

«Անցումային շրջանում» քաղաքական համակարգի վերափոխումների շրջանակներում զինվորականների կողմից իրականացված օրենսդրական փոփոխությունները նպատակառողով էին թուրքիայում քաղաքական կյանքը վերահսկելի և կանխատեսելի դարձնելուն։ Այդ փոփոխություններն իրականացնելուց հետո միայն զինվորականները ձեռնամուխ եղան իշխանությունը քաղաքական կուսակցություններին փոխանցելուն։ Թեև զինվորականներն իշխանությունը փոխանցեցին կուսակցություններին (1983 թ. դեկտեմբերին), այնուամենայնիվ, նրանք քաղաքական համակարգի վերափոխումների միջոցով ստացան քաղաքական կյանքի վրա ազդելու բազմաթիվ լծակներ, որոնք հնարավորություն տվեցին շարունակելու որոշիչ դերակատարում ունենալ երկրի պետական-քաղաքական կյանքում։

Վերջարանում ամփոփվում են ատենախոսության հիմնական

⁵⁶ Eric Nordlinger, նշվ. աշխ., էջ 10-19;

արդյունքները և արվում հետևյալ իմնական եզրակացությունները.

- 1960-70-ական թթ. Թուրքիայում գործում էր բանակ-հասարակություն փոխարարելությունների ներքափամեռ նորելլ, այսինքն՝ բանակը քաղաքականացված էր և հանդիս էր զայխ երկրի պաշտոնական գաղափարախոսության՝ քեմալիզմի պաշտպանի դիրքերից:
- 1980 թ. ռազմական հեղաշրջումը, ի տարրերություն հանրապետական Թուրքիայի պատմության ընթացքում երբեւ տեղի ունեցած այլ հեղաշրջումների, ուղղված չեր իմնականում մեկ կուսակցության կամ երևոյթի դեմ և ուներ տարարնույթ պատճառներ՝ քաղաքական համակարգի ճգնաժամ, իսլամական շարժումների զարգացում, գործադրությին ալիքի ահազնացում, ահարենչության աննախադեպ աճ և այլն:
- Ռազմական հեղաշրջման նախօրեին ահարենչությունը Թուրքիայում աննախադեպ ծավալների էր հասել, որն արդեն սպառնալիք էր ներկայացնում երկրի անվտանգությանը՝ ապակայունացնելով երկրի ներքին դրույթունը՝ ճանապարհ հարթելով դեպի քաղաքացիական պատերազմ:
- 1980 թ. ռազմական հեղաշրջումը կարելի է բնութագրել որպես խնամակալ հեղաշրջում, ինչը նշանակում է, որ զինվորականների իշխանությունը ժամանակավոր բնույթ էր կրում և հեղաշրջման պատճառները վերացնելուն պես նրանք իշխանությունը կրկին վերադարձնելու էին քաղաքացիական ուժերին:
- Ռազմական հեղաշրջումից հետո զինվորական իշխանությունները անցումային շրջանը (1980-1983 թթ.) որպես «հարմար առիթ» օգտագործելով՝ ուժեղ հարված հասցրին իրենց համար անցանկալի ուժերին, որոնք տեղ չունեին հեղաշրջման հեղինակների նախանշած քեմալական Թուրքիայում՝ քրդական շարժում, ձախ շարժում, ծայրահետ իսլամական շարժումներ և այլն:
- Նախքան իշխանությունը քաղաքական կուսակցություններին փոխանցելը, քարձաստիճան զինվորականները նոր սահմանադրաւթյան ընդունման և օրենսդրական փոփոխությունների միջոցով ավելի վերահսկելի դարձրին քաղաքական դաշտը և ուժեղացրին բանակի ազդեցության լծակները երկրի քաղաքական կյանքում, որոնք հնարավորություն տվեցին իշխանությունը կուսակցություններին փոխանցելուց հետո դեռ երկար տարիներ որոշիչ դեր խաղալ երկրի քաղաքական քատերաբեմում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՍԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Ազակողմյան ծայրահեղականների ահարենչությունը Թուրքիայում 1980 թ. ռազմական հեղաշրջման նախօրեին, Սերձավոր Արևելք պատճություն, քաղաքականություն, մշակույթ, հ. II, Եր., 2005, էջ 84-87:
2. Թուրքիայի 1980 թ. ռազմական հեղաշրջման պատճառների շուրջ, Սերձավոր Արևելք պատճություն, քաղաքականություն, մշակույթ, հ. III, Եր., 2006, էջ 51-55:
3. Ազգայնական շարժում կուսակցության («Գորշ գայլեր») գործունեության իմնական փուլերը Թուրքիայում 1960-70-ական թթ., Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. IV, Եր., 2006, էջ 103-113:

Думанян Артур Дереникович

**ВОЕННЫЙ ПЕРЕВОРОТ 1980г. В ТУРЦИИ:
ПРИЧИНЫ, ПРОЦЕСС, ПОСЛЕДСТВИЯ**

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 – “Всемирная история”

Защита состоится 8-го июня 2007г. в 13⁰⁰ часов на заседании действующего при Институте востоковедения НАН РА спец. совета 006 по адресу: 375019, г. Ереван, пр. Маршала Баграмяна 24г.

РЕЗЮМЕ

Комплексное исследование военного переворота 1980г. в Турции имеет важное научное и практическое значение. Оно весьма актуально не только для изучения истории Турции этого периода, но и для более глубокого понимания и оценки политических процессов в современной Турции, а также способов и форм воздействия армии на эти процессы.

Целью диссертации является многостороннее изучение военного переворота 1980г., выявление его истинных причин, характера и значения для дальнейшего развития Турции на основе широкого круга турецких и иных источников, значительная часть которых вводится в научный оборот впервые.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения и списка использованных источников и литературы.

В введении обосновывается актуальность исследования, определяются его цели, методическая основа и научная новизна, обосновывается практическое значение работы, представляется краткий обзор использованных источников и литературы.

Первая глава диссертации озаглавлена «ОБОСТРЕНИЕ ПОЛИТИЧЕСКОЙ СИТУАЦИИ В ТУРЦИИ В КОНЦЕ 1970-х годов» и состоит из трех параграфов. В параграфе «Межпартийная борьба и кризис политической ситуации» рассматриваются развитие политической ситуации в стране в период, предшествующий перевороту. Деятельность основных партий, действующих на политической арене. Особое внимание уделяется анализу особенностей межпартийной борьбы, развернувшейся между действующими на политической арене основными политическими силами.

В этом параграфе подробно рассматривается также острый политический кризис, в который оказалась вовлечена страна в связи с президентскими выборами 1980г., когда в течение более пяти месяцев парламент страны так и не смог выбрать президента. В параграфе «Исламский фактор как причина военного переворота» рассматриваются усиление исламского фактора в общественно-политической жизни страны и подъем политического исламизма в 1970-х годах, исследуются их причины, а также анализируется их влияние на процесс созревания предпосылок для военного переворота. В последнем параграфе, озаглавленном «Активизация левых в политической жизни страны», рассматриваются вопросы резкой активизации деятельности левых политических сил и профсоюзных организаций, а также усиления волны организованных ими забастовок. Особое место отведено анализу позиции военных в вопросе активизации левых.

Вторая глава диссертации озаглавлена «Рост терроризма в 1970-х годах» и посвящена изучению набравшего силу в стране терроризма. В 1970-х годах терроризм в Турции достиг небывалых размеров, его основными инициаторами являлись пантюркистское движение «Серых волков» и левые экстремистские организации. В параграфе «Движение “серых волков”» подробно анализируются процесс основания и усиления движения «серых волков», на конкретных примерах анализируются основные цели развязанной ими террористической деятельности. В параграфе на основе новых источников освещаются также малоизвестные подробности взаимоотношений между «серыми волками» и турецкими властями. Во втором параграфе представлена «Террористическая деятельность левосторонних экстремистских организаций».

Третья глава работы озаглавлена «ВОЕННЫЙ ПЕРЕВОРОТ 12 СЕНТЯБРЯ». В первом параграфе исследуется «Роль армии в политической жизни Турции». Здесь на основе анализа особенностей военного переворота 1960г. и «вмешательства» военных в 1971г., рассматривается турецкая модель взаимодействия армия-общество, особое место уделяется выявлению закономерностей процесса трансформации армии в существенный фактор политической жизни страны. Во втором параграфе, озаглавленном «Подготовка, осуществление и процесс военного переворота», представлены подробности подготовки и осуществления военного переворота. Последний параграф третьей главы озаглавлен «Внешний фактор». Здесь рассматриваются проблемы воздействия внешних факторов на подготовку и процесс осуществления военного переворота.

Четвертая глава диссертации, озаглавленная «ПЕРЕХОДНЫЙ ПЕРИОД (1980-1983гг.)», посвящена периоду, начавшемуся после военного переворота. В первом параграфе рассмотрены особенности репрессивной политики военных властей, выявлены их основные цели. Военные власти под предлогом борьбы с терроризмом осуществили широкомасштабные аресты своих политических противников, целью которых являлось искоренение «нежелательных движений». Военные нанесли сокрушительный удар по тем движениям, которые с их точки зрения представляли опасность для основ кемалистской республики. Второй параграф – «Конституционные изменения: конституция 1982г.», посвящен анализу конституции, принятой под непосредственным контролем военных. В последнем параграфе – «Переход к гражданскому управлению» представлены главные законодательные особенности новой политической системы. Хотя в декабре 1983г. военные передали власть партиям, тем не менее, с помощью осуществленных ими законодательных реформ они получили значительные рычаги воздействия на политическую жизнь страны.

В заключении обобщаются основные выводы диссертации.

Artur Dumanyan

The 1980 military coup d'etat in Turkey
The causes, the progression and the repercussions

